Ազգային Ժողովի դերը քաղաքական կոնսենսուսի կայացման գործընթացում

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Արդյո՞ք հնարավոր է արտահերթ խորհրդարանական ընտրությունների հասնել բացառապես քաղաքական որոշումների և քաղաքական համաձայնությունների ճանապարհով: Արդյո՞ք կարող են խորհրդարանական ուժերն իրար հետ քննարկել խորհրդարանի ապագայի հարցը, արդյո՞ք հնարավոր է բանակցել խորհրդարանն արձակելու-չարձակելու, նոր դերակատարություն ստանձնելու կամ համատեղ աշխատելու պայմանավորվածություն ձեռք բերելու կամ որևէ այլ տարբերակի շուրջ: Մեդալը, ինչպես միշտ, երկու կողմ ունի:

Կողմ առաջին. իշխանություն

Իշխանական քաղաքական գործիչները համարում են, որ ներկայացուցչական ժողովրդավարության տեսանկյունից այսօր խզում կա հասարակության ու խորհրդարանի միջև, և խորհրդարանն այսօր դե ֆակտո չի արտացոլում հասարակության քաղաքական կողմնորոշումների համապատկերը: Նրանք, ըստ էության, չեն հրաժարվում խորհրդարանը դիտարկել որպես քաղաքական հնարավոր կոնսենսուսի հարթակ, ինչը հիմա նաև տեսանելի է ընթացիկ հարցերի շուրջ աշխատանքներում, բայց ավելի մեծ հարցերում՝ Սահմանադրության փոփոխություններ, ԱԺ ինքնարձակում, մեծ են համարում քաղաքական ճգնաժամի ռիսկը: Այս դեպքերի համար հստակ պատկերացումներ դեռ չկան, տեսանելի լուծումներն էլ այս պահին դեռ քաղաքականությունից, անգամ Սահմանադրությունից դուրս են:

Կողմ երկրորդ. ընդդիմություն

Խորհրդարանը ներկա ընդդիմադիրների համար դադարել է լինել քաղաքական բանակցությունների վայր, քանի որ, ըստ իրենց, երկրում չկա քաղաքական այն երկրորդ սենյակը, որտեղ կարելի է բանակցել և թեկուզ փոքր համաձայնությունների գալ: Նրանք համոզմունք ունեն, որ իշխանության մեջ կա միայն մեկ քաղաքական որոշումներ կայացնող և խորհրդարանական գործիչները լավագույն դեպքում կարող են միայն կապի միջոց հանդիսանալ անգամ ամենափոքր հարցերի դեպքում: Ընդդիմադիրները՝ մասնավորապես նախկին իշխանության ներկայացուցիչները, համարում են, որ իրականացվող քայլերի արդյունքում իրենք հայտնվել են մի վիճակում, երբ քաղաքական առումով այլևս կորցնելու ոչինչ չունեն: «Մեզ հաղթել են, հիմա փորձում են ոչնչացնել»,- այսպիսի տպավորություն են նրանք ստանում իշխանության կողմից այսօր իրականացվող քայլերից ու հնչեցվող ուղերձներից:

Ինչ կլինի, եթե ամեն ինչ այսպես շարունակվի

Դժվար չէ կանխատեսել զարգացումների այն «մեյնսթրիմը», որը կունենանք, եթե քաղաքական ուժերը հենց այս պահից չսկսեն խոսել, չսկսեն իրար մեջ ու իրար հետ քննարկել, թե ինչպես են պատկերացնում խորհրդարանի ապագան: Եթե չլինի կոնսենսուսի միտված բանակցային ճանապարհ, ամենօրյա աշխատանք այդ ուղղությամբ, համապատասխան միջավայր, ցանկություն, անգամ պրոֆեսիոնալ միջնորդություն, կունենանք մի իրավիճակ, որն ավելի շատ կնմանվի բախման, քան քաղաքական գործընթացի: Սա տեսանելի զարգացման սցենար է թվում այսօր, եթե կողմերից մեկի նպատակն ամեն գնով խորհրդարանի արձակման, իսկ մյուսինը՝ ամեն գնով չարձակման գնալն է: Իսկ եթե նպատակը, այնուամենայնիվ, առանց հոգեբանական կամ ֆիզիկական բռնության որևէ լուծման հասնելն է, ապա հաստատ աշխատանք կա անելու:

Փոքր քայլերի արվեստը. միջնորդություն

- Հեղափոխություն է եղել, գործադիրն ունի համաժողովրդական աջակցություն, իսկ այս խորհրդարանը չի արտահայտում ներկա իրողությունները և պետք է հեռանա:

- Ունենք լեգիտիմ մանդատներ, կարող ենք արդյունավետորեն հակակշռել կառավարության աշխատանքը, համարժեք վերաբերմունքի դեպքում կարող ենք լինել համագործակցային և չենք պատրաստվում գնալ ինքնալուծարման:

Կողմերի հիմնական այս արգումենտները կանխատեսելի են: Առաջին հայացքից՝ կարծր ու հակադիր համոզմունքներ, որոնք իրականում իրերի միայն մակերեսային դասավորվածությունն են

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

արտացոլում: Թե ի՞նչ կա ստորին հարթություններում և դիրքորոշումները մոտեցնելու որքա՞ն տեղ կա, լրացուցիչ լուրջ աշխատանք է պահանջում: Հայաստանում կան համապատասխան կարողություններ կուտակած, փորձ ունեցող ինստիտուցիոնալ միավորներ, որոնք կարող են սկսել աշխատել քաղաքական հակադիր հոսանքների շահերի համակողմանի բացահայտման ուղղությամբ, իրականացնել բանակցային միջնորդություն՝ առաջին փուլում գոնե միմյանց ցանկությունների սպեկտրն ավելի լավ հասկանալու ուղղությամբ:

Համառոտագիրը մշակվել է 2018թ. սեպտեմբերի 14-ին կայացած՝ «Քաղաքական կոնսեսնսուս. քայլեր, ռիսկեր, հնարավորություններ» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հետ համագործակցությամբ: